

## Հաշվետվություն

Անձնական տվյալների պաշտպանության գործակալության փորձագետ  
Մկրտիչ Խաչատրյանի  
2020թ.-ի հուլիսի 24-ից 2021թ.-ի հուլիսի 23-ի համար

Ըստ ՀՀ ԱՆ Անձնական տվյալների պաշտպանության գործակալության (այսուհետ նաեւ՝ Գործակալություն) փորձագետի կողմից իրականացվող աշխատանքային ծրագրի նպատակների՝ հայտնում եմ, որ 2020թ.-ի հուլիսի 24-ից 2021 թվականի հուլիսի 23-ը իրականացրել եմ հետեւյալ հիմնական աշխատանքները.

- տրամադրվել է մասնագիտական օժանդակություն անձնական տվյալներ մշակող էլեկտրոնային համակարգերը բավարար պաշտպանության մակարդակ ունեցող ճանաչելու վերաբերյալ, այդ թվում՝ անձնական տվյալներ մշակելու համար օգտագործվող սարքերը և փաստաթղթերը, այդ թվում՝ առկա տվյալները և համակարգչային ծրագրերը ստուգելու ընթացքում:
- Անձնական տվյալներ մշակողներին եւ անձնական տվյալների սուբյեկտներին տրամադրվել է անձնական տվյալների մշակման վերաբերյալ խորհրդատվություն (որպես խորհրդատվություն է դիտվում նաև իրականացված ուսուցումը)՝ կապված տեղեկատվական անվտանգության, անձնական տվյալների առցանց պաշտպանության եւ նմանաբնույթ այլ հարցերի վերաբերյալ:  
Իմ կողմից տրամադրված խորհրդատվությունը վերաբերում է հիմնականում հետեւյալ թեմաներին.

**- սոցիալական ցանցերում ինքնության գողության և քաղաքացիների նկարների գողության ու դրանք կայքից հեռացնելու վերաբերյալ**

**- Երեխաների անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ,**

**- Անձնական տվյալների պաշտպանության մասին ՀՀ օրենքի կիրառման վերաբերյալ (առցանց տիրույթում),**

**- Համացանցում կեղծ (fake) էջերը հեռացնելու վերաբերյալ,**

**- Հավելվածների օգտագործման վերաբերյալ,**

**- Կիրեռանվտանգության եւ համացանցային հիգիենայի վերաբերյալ:**

**- Անձնական տվյալների պաշտպանության գործակալության աշխատակիցների և մեդիափորձագետների հետ համատեղ իրականացրել են առցանց ուսուցում շուրջ 400 բուժաշխատողների համար և առցանց ուսուցում օնլայն տիրույթում անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ 70.000 հեյրևոդ ունեցող ֆեյսբուքյան խմբում:**

- իրականացվել են ուսումնասիրություններ, մշակել ուղեցույցներ, տեղեկատվական նյութեր, հայտարարություններ, գրություններ, առաջարկություններ, դիտողություններ կամ տրամադրվել եզրակացություններ դրանց վերաբերյալ:

Մասնավորապես.

**- կապված պատերազմական իրավիճակում ֆեյսբուքում հայ օգտատերերի հաշիվների վրա ադրբեջանական հաքերների հարձակումների ակտիվացմամբ գործակալության էջում հրապարակել են երկփուլանի վավերացմամբ սոցիալական ցանցերի էջերն ու էլ. փոստի հասցեները անվտանգ դարձնելու մասին ուղեցույցներ (Facebook-ում, Googleni-ում, Yahoo-ում, Mail.ru-ում, Yandex-ում, Instagram-ում, Twitter-ում, Telegram-ում)**

**-պատերազմական ժամանակ կապված հաքերային հարձակումների ակտիվացմամբ մոնիթորինգի են ենթարկել ադրբեջանական հաքերային խմբավորումների (Azerbaijan Cyber Army, Karabakh Hacking Team) կատարած հարձակումները և անձնական տվյալների հափշտակությունների վերաբերյալ կատարել համապատասխան գործողություններ՝ ուսումնասիրություն, համապատասխան մարմիններին տեղեկության տրամադրում, հայտարարությունների, կանխարգելիչ ու իրազեկող նյութերի պատրաստում ու հրապարակում:**

**-վիդեոուղեցույց՝ Android համակարգում թուրքական որոշ սերտիֆիկատների հեռացման վերաբերյալ, որն ունեցել է 290.000-ից ավելի դիտում Գործակալության ֆեյսբուքյան էջում:**

**- վիդեոուղեցույց Getcontact հավելվածի բազայից հեռախոսահամարը հեռացնելու վերաբերյալ**

**- հրապարակել են մի շարք խորհրդարարական նյութեր ու տեսանյութ Ֆեյսբուք սոցիալական ցանցում տարածված խաբեության վերաբերյալ, երբ, տարբեր հայտնի մարդկանց անունից հանդես գալով, քաղաքացիներից գողանում էին բանկային տվյալներն ու գումար հափշտակում:**

**Գործակալության Ֆեյսբուքի էջում հրապարակվել է 100-ից ավելի իրազեկող նյութ Գործակալության վարույթների, խորհրդարարությունների վերաբարյալ, ինչպես նաև տվյալների հետ ճիշտ վարվելու կանոնների մասին խորհրդարարական նյութեր, համացանցում տարածված վիրուսներից զերծ մնալու մասին հայտարարություններ:**

ԵՄ ֆինանսավորմամբ գործող Cybersecurity East Project նախագծի շրջանակներում մասնակցել են Certified Information Systems Security Professional հնգօրյա առցանց թրեյնինգի:

• փորձագետը վարել է Գործակալության էջերը սոցիալական ցանցերում Գործակալությունն ունի էջ facebook սոցիալական հարթակում՝ Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն / Armenian PDPA անվանմամբ հետևյալ հիպերհղմամբ՝ (<https://www.facebook.com/PersonalDataArmenia/>):

Սույն հաշվետվությունը ներկայացնելու օրվա դրությամբ.

- Գործակալության էջն ունի 14071 բաժանորդ,

- էջի հավանումների քանակը 13122 է: 2020 թվականի հուլիս ամսից սկսած հավանումների քանակն աճել է 5119-ով:

- Հրապարակման լուսաբանումը՝ post reach (այն մարդկանց ունիկալ թիվը, ովքեր տեսել են էջի գրառումները 1 տարվա ընթացքում կազմել է ավելի քան 1.500.000),

- էջում իրականացվել է ավելի քան 100 բովանդակային հրապարակում (տեղեկատվական նյութ, հայտարարություն եւ այլն),
- էջի միջոցով տրամադրվել է շուրջ 100 գրագրություն (հիմնականում առցանց խորհրդատվություն):
- Բացվել է Գործակալության խումբը Ֆեյսբուքում, որում կան 400-ից ավելի մասնակիցներ: Խումբն օգտագործվում է իրազեկման ու առցանց ուսուցումներ կազմակերպելու համար:
- հաշվի առնելով քաղաքացիների ներկայացվածությունը Instagram սոցիական ցանցում, հուլիսի 15-ին Գործակալության էջն է բացվել այս սոցիալական ցանցում: Հաշվետվությունը ներկայացնելու օրվա դրությամբ հետևողների քանակը՝ 154:
- Բացվել է Գործակալության էջը Telegram–ում: Հաշվետվությունը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 42 բաժանորդ:

- Գործակալության բաժիններին վարույթների իրականացման կամ մոնիթորինգների անցկացման ընթացքում եւ բաժինների իրավասությունների ոլորտում գտնվող այլ հարցերում տրամադրված փորձագիտական օժանդակությունը ներառում է ինչպես վերոնշյալը, այնպես էլ աշխատանքային կարգով տրամադրվող խորհրդատվությունն այն իրավական ակտերի վերաբերյալ, որոնց մասին Գործակալությունը կարծիք է ներկայացրել:

Անձնական տվյալների պաշտպանության  
գործակալության փորձագետ Մկրտիչ Խաչատրյան

23.07.2021թ.

